

«ԼԱՎԱԳՈՒՅՆ ԳՐԱԴԱՐԱՆ» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

ԿԱՐԳ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայկական գրադարանային ասոցիացիայի (այսուհետ՝ ասոցիացիա) կողմից կազմակերպվող «Լավագույն գրադարան» մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) անցկացման կարգը և պայմանները:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐԸ

2. Մրցույթն անցկացվելու է հետևյալ անվանակարգերով.

1. «Լավագույն համայնքային գրադարան»
2. «Լավագույն մարզային գրադարան»
3. «Լավագույն նորարար գրադարան»
4. «Լավագույն գիտակրթական գրադարան»
5. «Լավագույն մասնագիտական գրադարան»

III. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

3. Մրցույթն իրականացվում է հետևյալ ժամանակացույցով.

Հայտերի ընդունման մեկնարկ	2021 թ. հուլիսի 12
Հայտերի ներկայացման վերջնաժամկետ	2021 թ. օգոստոսի 20 (ներառյալ)
Հայտերի գնահատում և արդյունքների ամփոփում	2021 թ. սեպտեմբերի 20
Մրցանակների հանձնում	2021 թ. հոկտեմբերի 7

IV. ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԱՅՄԱՆՆԵՐԸ

4. Մրցույթին կարող են դիմել Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր գրադարանները:
5. Հայտի փաթեթը (բոլոր նյութերը «PDF» ձևաչափով, իսկ ամբողջը՝ «rar» կամ «zip» փաթեթով) պետք է ուղարկել «lavaguyngradaran@gmail.com» էլեկտրոնային հասցեին՝ «Թեմա» տողում նշելով գրադարանի անվանումը:

6. Հայտի փաթեթը պետք է ներառի՝

- ◆ լրացված ձևաթուղթը (**կցվում է**),
- ◆ գրադարանի առօրյայի մասին պատմող տեսանյութ (առավելագույնը 5 րոպե),
- ◆ հիմնական ցուցանիշները՝ ընթերցողների քանակը, հաճախումների քանակը, գրադարանային հավաքածուների տարեկան համալրման ցուցանիշը, գրքատացքը,
- ◆ Հայկական գրադարանային ասոցիացիան և մասնագիտական հանձնաժողովը հարկ եղած դեպքում կարող է դիմումատուից պահանջել հավելյալ փաստաթղթեր և նյութեր, ինչպես նաև կազմակերպել այց գրադարան:

V. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

7. Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային եղանակով:
8. Մասնակիցը մինչև հայտերը ներկայացնելու վերջնաժամկետի ավարտն իրավունք ունի չեղարկելու իր հայտը:
9. Հայտի ստացման պարագայում «lavaguyngradaran@gmail.com» էլ. փոստից հայտատուն պետք է ստանա հաստատող նամակ:
10. Հայտերի ընդունման վերջնաժամկետի ավարտից հետո յոթ աշխատանքային օրվա ընթացքում Հայկական գրադարանային ասոցիացիան հայտերը ներկայացնում է մրցութային հանձնաժողովի անդամներին՝ գնահատման:
11. Հանձնաժողովի անդամները հայտերի ստացումից հետո սահմանված ժամկետում հանձնաժողովի նախագահին են ներկայացնում մրցույթի գնահատման թերթիկները:
12. Մրցույթի արդյունքներն ամփոփվում են հանձնաժողովի եզրափակիչ նիստում հանձնաժողովի անդամների գնահատման թերթիկների հիման վրա:
13. Հանձնաժողովն ընդունում է որոշում մրցութային անվանակարգերում հաղթող գրադարանների ցանկը հաստատելու վերաբերյալ:
14. Հաղթող է համարվում ամենաբարձր միավորներ հավաքած գրադարանը: